

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՆ ԵՎ XII ԴԱՐԻ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ա. Ա. ԻՈՋՈՑԱՆ

Ժողովածուի հեղինակը. Ներսես Լամբրոնացին XII դարի երկրորդ կեսի Մերձավոր Արևելքի պատմության ամենահայտնի եկեղեցաքաղաքական գործիչներից է: Լինելով Կիլիկիայում իր հզորությամբ երկրորդ՝ Լամբրոնի Օշինյան ազնվականական տան զավակը և Հռոմկլայի կաթողիկոսների ազգականը, նա իր դարաշրջանում տեղի ունեցած մի շարք նշանավոր իրադարձությունների գործող անձն է: Մասնակցել է Հռոմկլայի եկեղեցական ժողովին, ևս II Ռուբինյան իշխանի հանձնարարությամբ ուղարկվել է դիմավորելու Ֆրիգիա Շիկամորուսի (Բարբարոսա) գլխավորած երրորդ խաչակրաց բանակին, ղևասյանազնացության արջվել է Կոստանդնուպոլիս¹: Ներսես Լամբրոնացին նաև քաղաքեղուն մատենագիր է՝ մի շարք մեկնությունների, ներբողյանների, տաղերի, ճառերի, թղթերի և հունարենից, լատիներենից ու ասորերենից կատարված թարգմանությունների հեղինակ²: Նրա մատենագրական վաստակի մեջ ուրույն տեղ ունի խնդրո առարկա ռեալիստ խնդրոյ միաբանության թագաւորին հոռոմոց էմանուելի և սրբոց կաթողիկոսացն Հայոց Ներսիսի և Դրիգորիսի թուղթն, զոր գրեցին առ միմեանս ժողովածուն³: Այդ ևրկի մեջ տեղ են գտել 1165—1178 թթ. եկեղեցիների միության հայ-բյուզանդական բանակցություններին վերաբերող վավերագրերը⁴:

Ժողովածուի հեղինակը Հայոց եկեղեցու Կիլիկիայում գտնվող կարևորագույն եկեղեցական թեմերից մեկի՝ Տարսուսի արքեպիսկոպոսն էր⁵: Քաղաք, որը երկար ժամանակ Կիլիկիայի բյուզանդական կառավարիչների նստավայրն էր⁶ և Կոմնենոս կայսրերի տիրելիքական քաղաքականության հենակետը Փոքր Ասիայում⁷: Տարսուսը XII դարի 70—80-ական թթ. իր հիմնական բնակչությամբ հայկական քաղաք էր, սակայն այնտեղ բնակվում էին

¹ Ներսես Լամբրոնացու գործունեության մասին տե՛ս. Ն. Ա. Կիլիկիայ. Ներսես Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսուսի (կյանքն և գրական վաստակները հանգերձ ազգաբանությամբ Պաշլավունյաց և Լամբրոնի Հեթմանց). Վիեննա, 1956, էջ 29—56. հմմտ. Գր. Հակոբյան. Ներսես Լամբրոնացի. Երևան, 1971, էջ 67—84:

² Տե՛ս Ն. Ա. Կիլիկիայ. նշվ. աշխ., էջ 131 և հա.՝ L. B. Zekiyan. Nersès de Lambron. — In: Dictionnaire de Spilifualité, t. XI, p. 123—134.

³ Լևոն Զեքիյանը վերոհիշյալ հոդվածի մեջ վրիպմամբ չի հիշատակել ժողովածուն, Այս մատենագրական երկի ամենավերջին և լավագույն հրատարակությունը, որն այսուհետև հղելու ենք, տե՛ս Ընդհանրական թուղթը սրբոյն Ներսիսի Շնորհալույ, Երուսաղեմ, 1871, էջ 86—201 (այսուհետև՝ ՊԽՄ, 1871):

⁴ Այս վավերագրերին նվիրված ուսումնասիրությունների մեջ տե՛ս Լ. Կ. Զեքիյան. Համամիութենական տրամախոսություն մը ԺԲ դարուն. Վենետիկ, 1978; A. A. Keshishian. The problem of church Unity in Twelfth century. — «Հատկ» (հայագիտական տարեգիրք), նոր շրջան, Անթիլիաս, 1980, էջ 91—106:

⁵ Տե՛ս Ն. Ա. Կիլիկիայ. նշվ. աշխ., էջ 22. հմմտ. նաև ՊԽՄ, 1871, էջ 199:

⁶ Ա. Բողոյան. Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկիայի Հայաստանը ԺԲ դարի 30—70-ական թվականներին. Երևան, 1988, էջ 202 և հտ.:

⁷ Այդ ժամանակաշրջանի հետ է համընկնում նաև Անտիոքի դքսության կողմից Տարսուսի ժամանակավոր դրավումը (տե՛ս Ղ. Ալիշան, Միսուան. Վենետիկ 1885, էջ 267):

նաև հույներ, երկաթնակ հայեր, կաթոլիկներ և հակոբիկ ասորիներ: Հավանաբար ազգաբնակչության մեջ քիչ թիվ չէին կազմում նաև մուսուլման արաբներն ու թյուրքերը, կային նաև հրեաներ, Բազմազգ բնակչությունը բնորոշ էր նաև այդ ժամանակաշրջանի Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի հայաբնակ մյուս շրջաններին, որն իր ուրույն դերն է խաղացել ինչպես ներսես կամբոնացու, այնպես էլ Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի և Ռուբինյան իշխանության եկեղեցաքաղաքական և դավանական գործունե: թյան ձեւավորման մեջ⁸:

Մեկենասը. ՊԽՄ վավերագրերի ժողովածուն կազմված է ներսես կամբոնացու եղբոր՝ կամբոնի իշխան Հեթումի⁹ պատվերով: Այդ մասին է վկայում հայագետների ուշադրությունը դեռևս XIX դարում գրաված լեռնա կամբոնացու ՊԽՄ հավաքածուի հիշատակարանը¹⁰, ուր հեղինակը մեզ հետաքրքրող երկի մասին գրում է. «Այսմ ականատես և ականջալուր եղեալ նուաստս հոմանուն նորին տեառն ներսեսի հայրապետի, ըստ փառքսման քն, իշխան բարեպաշտ և հարազատ եղբայր իմ Հեթում, շարադրեցի համառօտաբար զպատճառ նամական հանդերձ թղթովքն»¹¹:

Ժողովածուի կազմը. վերոբերյալ վկայությունից տեղեկանում ենք, որ վավերագրերի հավաքածուն կազմող ներսես կամբոնացին հեղինակն է հայբյուզանդական բանակցությունների յուրաքանչյուր փուլին հաջորդող լրացուցիչ տեղեկությունների, ժողովածուն ամբողջացնող առաջաքանի և վերջաքանի: Այս երկում զետեղված են Հայոց կաթողիկոսների Գրիգոր Գ Պահլավունու (1113¹²—1165), ներսես Դ Շնորհալու (1165—1173), Գրիգոր Դ Տղայի (1173—1193), բյուզանդական կայսր Մանուել I Կոմնենոսի (1143—1180) և Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայել Գ Անքիալոսի (1170—1178) միջև փոխանակված նամակների բնագրերը, որոնք XI¹³ դարի երկրորդ կեսի հայբյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության անգնահատելի սկզբնաղբյուրներ են: ՊԽՄ ժողովածուն պարունակում է 1165—1177 թթ. գրված 17 վավերագիր, որոնցից տասնմեկը վերահիշյալ հայոց կաթողիկոսների¹⁴ դավանաբանական թղթերն են և պաշտոնական գրությունները բյուզանդական կայսեր և պատրիարքի հետ, չորսը՝ Մանուել Կոմնենոսի, երկուսը՝ Միքայել Գ Անքիալոսի թղթակցություններն են Հռոմկլայի հոգևոր առաջնորդների հետ: ՊԽՄ-ում թղթերը բերված են ժամանակագրական հերթականությամբ. երբեմն ներսես կամբոնացին տալիս է այս կամ այն թղթի գրման հանգամանքներին կամ թվականին վերաբերող ծանոթագրություններ՝ «պատճառներ», որոնց մասին Հեթումին գրած հիշատակարան-թղթում ասում է. «Շարադրեցի համառօտաբար

⁸ Այս մասին ընդհանուր գծերով տե՛ս Ա. Բոգոյան, նշվ. աշխ., էջ 12—18, 164—190:

⁹ Նրա մասին հանգամանորեն տե՛ս Ն. Ակիսյան, նշվ. աշխ., էջ 116—130:

¹⁰ Այս հիշատակարանը ժամանակին հրապարակել է Ղ. Ալիշանը (տե՛ս Հայագատում. պատմիչը և պատմությունը Հայոց, յօրինել և հաւաքել ի հ. Ղեռնդեայ վ. Մ. Ալիշան յաթոակալ վարդապետէ. Վենետիկ, 1901, էջ 426—427): Այնուհետև այն տպագրվել է ևս երկու անգամ. տե՛ս Գարեգին Ա Կաթողիկոս. Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250 թ.). Անթիլիաս, 1951, էջ 622: Ա. Ս. Մաթևոսյանը (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺԲ գդ., Երևան, 1988) վրկայել է և չի հրապարակել այն իր աշխատասիրած հատորում:

¹¹ Ն. Ակիսյան, նշվ. աշխ., էջ 218:

¹² Տե՛ս Մ. արք. Օրմանյան, Ազգապատում. Կ. Պոլիս, 1912, § 924, 927: ՊԽՄ-ի բնագրում (1871, էջ 86) ներսես կամբոնացին Գրիգոր Գ Պահլավունու դավանական թվական է համարում «հայոց հինգ հարիւր յիսուն և ինն»-ը, որը համապատասխանում է 1110 թ. փետրվ. 22—1111 թ. փետրվ. 27 ժամանակահատվածին:

¹³ Գրիգոր Գ կաթողիկոսի առումից ժողովածու մտած միակ վավերագրի հեղինակը, ըստ այդ թղթի վերնագրի, ներսես Շնորհալին է. «Երեալ ի ներսես արքեպիսկոպոսէ յեղործ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց» (ՊԽՄ, 1871, էջ 87):

դՊատճառ նամակացն հանդերձ թղթովքն: Այդ վավերագրերը ինքնին, և ժողովածուում թննարկված՝ պատմությունը, ծեսին ու վարդապետությունը վերարկրող խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական իշխանությունների ու Հռոմկլայի կաթողիկոսարանի փոխհարաբերությունների բնույթը, Բյուզանդական կայսրության և Կոստանդնուպոլսի պատրիարքության վերաբերմամբ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Ինչպես արդեն նկատել ենք, ժողովածու չեն մտել մի շարք վավերագրեր, որոնք անպայմանորեն վերաբերում են փաստաթղթերի այս խմբին և լրացնում են դրանց¹⁴: Մեր կարծիքով, ներսես Լամբրոնացին ՊԽՄ-ի բնագիր չի մոծել դրանք, հաշվի առնելով հետևյալ հանգամանքները¹⁵:

ա) Այդ վավերագրերի մի մասում շարադրված տեսակետները արդեն արձանագրված կան ՊԽՄ-ում տեղ գտած մյուս գրություններում¹⁶:

բ) վավերագրերի մի մասը գաղտնի է եղել և դրանց հրապարակումը արգելվել է¹⁷:

դ) Մի շարք վավերագրեր էլ կամ հաստատված չեն եղել կաթողիկոսների կողմից, կամ էլ ունենալով ծրագրային բնույթ, գրված են եղել Հռոմկլայի նոտարատանը պահվելու նպատակով և չեն առաքվել Կոստանդնուպոլիս¹⁸:

Ինչ խոսք, ներսես Լամբրոնացին ժողովածուի մեջ չի ներառել Հայոց կաթողիկոսների նամակագրությունը Հյուսիսային Հայաստանի (Արցախ, Հաղպատ, Սանահին) վարդապետների և ասորիների հակոբեկյան պատրիարքների հետ, փաստաթղթեր, որոնք անմիջականորեն առնչվում են հայ-բյուզանդական բանակցություններին¹⁹:

Ժողովածուի ստեղծման թվականը. նախքան այս երկի պատմաաղբյուրադիտական թննարկմանն անցնելը, անհրաժեշտ է անդրադառնալ ժողովածուի կազմման թվականի ճշգրտմանը: ՊԽՄ-ի շարադրման թվականը ժամանակակից փորձել է որոշել ներսես Ակինյանը: Նկատի ունենալով Փարիզի № 179 և Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) № 2496 հնագույն ձեռագրերում պահպանված և հեղինակի կողմից ՊԽՄ-ի վերջում տեղադրված ներսես Լամբրոնացու վերոհիշյալ հիշատակարանը, Վիեննայի բազմավաստակ հայագետը գրում է. «Կից յիշատակարանս, որ թեև թվական չի կրեր. բայց կը վերջանա Մանուել կայսեր մահվան հիշատակությամբ, որ տեղի ունեցավ 1180 սեպտ. 24-ին: Ուստի գրության տարին ալ նկատելու է այս տարին»²⁰: Հավանաբար Վիեննայի միսթարյան միաբանը նկատի է ունեցել ոչ թե այդ հիշատակալուստը, ուր նման վկայություն չկա, այլ ՊԽՄ-ի վերջաբանի ձևը՝ երանելիս... յաւիտեանս. ամէն» հատվածը²¹:

Ժողովածուի վերջաբանում ներսես Լամբրոնացին ոչ միայն հիշատակում է, այլ նաև ճշգրիտ թվագրում է Մանուել I Կոմնենոսի մահվան լուրը Հռոմկլա հասնելու ամսաթիվը. «Նուաք զվախճան բարեպաշտ աստուածասէր ե իմաստուն արքային Հռոմոց, յամսեանն սեպտեմբերի քսան և եւթն, և ի

14 Տե՛ս Ա. Բողոյան. Գրիգոր Գ Փոքր Վկայանրին վերագրված մի թղթի մասին. — «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, № 3, էջ 98:

15 Ներքոբերյալ կետերի մասին ավելի հանգամանորեն տե՛ս հրատարակության հանձնված «ՊԽՄ» ժողովածուի գիտահամեմատական բնագրի առաջարանը և հավելվածները:

16 Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, № 3, էջ 97:

17 Օրինակ, Մանուել Կոմնենոսի գաղտնի թուղթը, որի մասին տե՛ս Ա. Բողոյան. նշվ. աշխ., էջ 245:

18 Օրինակ, բյուզանդական կողմի պահանջած ինն ծիսադավանարանական կետերի պատասխանները:

19 Այս հանգամանքը մասնական է ներսես Ակինյանը («տե՛ս նշվ. աշխ., էջ 220»):

20 Նույն տեղում, էջ 219:

21 Տե՛ս ՊԽՄ, 1871, էջ 301:

թուականիս Հայոց վեց հարիւր և քսան և իննս²² (=1180 թ. սեպտեմբերի 27): Ներսես Լամբրոնացին գիտե նաև Կոստանդնուպոլսում դպրերի հետա-
գոյ դարձացման մասին. «Եւ ապա՝ զի որդի նորին (սկզբնադրութիւնը նկատի
ունի Մանուել I Կոմնենոսի որդի Ալեքս II Կոմնենոսին—Ա. Բ.) մանուկ
տիօք յաջորդեալ զաթոռն, ոչ կարաց ի խաղաղութիւն նուաճել զընտանիսն,
ալ՝ ռադ ևս ունի զթագաւորական քաղաքն ամբոխ խռովութեան յիշխանացն
և լրնտանեացն, որք հակառակ նմին յառնեն, յորոց միջի ոչ սակաւ հեղմունք
արեանց լինին և ամենայն բարեկարգութեանց լուծումն»²³:

Այս ատվածից ակնհայտ է, որ ժողովածուն կազմող Նոթսը Լամբ-
րոնացին քաջատեղյակ է Կոստանդնուպոլսում 1180—1183 թթ. տեղի ունե-
ցող ողբերգական իրադարձություններին՝ Մանուել I Կոմնենոսից հետո Ալեքս
II Կոմնենոսի (1180—1183) գահակալմանը, Մանուել I-ի դստեր և Իսաաի
խռովությանը, Անդրոնիկոս I Կոմնենոսի խարդավանքներին (մանկահասակ
կայսեր խնամակալի՝ Ալեքս II-ի մոր սպանությունը, թագավորին իրկելու
խոստումներով նրա մուտքը Կոստանդնուպոլիս և զահակից-խնամակալ հայ-
տարութիւնը)²⁴: Վերջաբանի հեղինակը վկայում է նաև, որ Բյուզանդական
կայսրության մայրաքաղաքում լլիբից ամաց սկսեալ՝ դեռ ևս Երոստ օրէ
աճէ խռովութիւնն և ի կարծիս ձգի ամենայն միտք առ ի հաստատելոյ վեր-
ջստին թագաւորական աթոռոյն»²⁵: Ներսես Լամբրոնացու՝ վերահիշյալ անցու-
դարձերին վերաբերող ակնարկները, և Ալեքս II Կոմնենոսի սպանության և
նրա հարսդատ Անդրոնիկոս I Կոմնենոսի (1183—1185) միահեծան գահա-
կալման իրադարձությունների մասին պահպանած լուրերը և հիշատա-
կությունը այն մասին, որ Մանուել I Կոմնենոսի մահվանից հետո Բյուզան-
դական կայսրությունում սկսված ներքաղաքական պայուսքը սուղէն երրորդ
տարին է լինելի դադարում, թույլ են տալիս վերանայել ն. Ալեքսանի կողմից
ՊիՄ ժողովածուի ստեղծման վերահիշյալ թվագրումը: Ելնելով ՊիՄ-ում
պահպանված վկայություններից, ժողովածուն պետք է թվագրել 1182 թ.
սեպտեմբերի 24—1183 թ. սեպտեմբեր ժամանակահատվածով: Թվագրման
սկիզբը հմ համարում 1182 թ. սեպտեմբերի 24-ը, որովհետև այդ թվականին
է սկսվում Ալեքս II-ի միանձնյա թագավորության երրորդ տարին, իր հոր՝
Մանուել I Կոմնենոսի մահվանից հետո²⁶: Ինչպես ցույց տվեցինք վերևում,
Ներսես Լամբրոնացին կայսրության մայրաքաղաքում տեղի ունեցող հերքա-
ղաքում ևս խռովությունների սկիզբը թվագրում է իր լողմից ՊիՄ ժողովա-
ծուն կազմելուց երեք տարի առաջ («յերից ամաց սկսեալ»): Այդ իսկ պատ-
ճառով, ժողովածուն Երևել վերջին սահման ենթ համարում 1183 թ. սեպ-
տեմբերը, քանի որ Ներսես Լամբրոնացին դեռ չգիտե Ալեքս II Կոմնենոսի
սպանության և Անդրոնիկոս I Կոմնենոսի գահակալման լուրը:

²² ՊիՄ. 1871, էջ 200. Բյուզանդադիտության մեջ Մանուել I Կոմնենոսի մահվան
ամսաթիվ է նշանակվում 1180 թ. սեպտեմբերի 24-ը (տե՛ս V. Grumel. La Chrono-
logie (Traite d'etudes byzantines, I), Paris, 1958, p. 358): Միջնադարում հաղորդակ-
ցության ճանապարհների և լուրերի տարածման ժամկետների ուսումնասիրության տեսանկյու-
նից յայտադանք արժեքավոր է այս վկայությունը, ըստ որի սեպտեմբերի 24-ին մահացած կայ-
սեր մահվան լուրը Հոռովոյ (գուցե և Կիլիկյան Հայաստանի նկատի ունի մեր հեղինակը)
է հասել սեպտեմբերի 27-ին, այսինքն՝ դեպից երեք օր հետո:

²³ ՊիՄ, 1871, էջ 201.

²⁴ Այս իրադարձությունների մասին մանրամասներն տե՛ս A. A. Vasiliev. History of the Byzantine Empire 324—1453. Vol II, Medison and Milwaukie, 1957, pp. 433 &.

²⁵ ՊիՄ, 1871, էջ 201.

²⁶ Ալեքս II Կոմնենոսը գահակալ է հռչակվել դեռևս Մանուել I-ի իշխանության
տարիներին, Այդ մասին տե՛ս F. Chalandon, Les Comnène. T. II (1). 1921, p. 212.

Պետ-ի հեղինակի պատմագիտական հալացքն ու դիֆֆուզումը. ինչպես արդեն նշվեց, ժողովածուի կազմման համար առիթ է ծառայել Հեթում Լամբրոնացու խնդրանքը, սակայն հեղինակը բնագրի առաջաբանում իսկ Պետ-ն հասցեագրել է հետագա սերունդներին. «...այս ստեղծումը, զի թէպէտ ե հասարակական վախճանաւն փոխի յաստ. ալս, սակայն արձան մշտնջենաւոր ինքեան թողու յերկրի զարժանի լիշատակի գործս, որով և յազգս ազգաց անյապաղ գովասանական երգով պատուի»²⁷, ներսես Լամբրոնացին բաշ գիտակցել է ժողովածուի մեջ ընտրված վավերագրերի արժեքը և պատմության գիրկն անցած մարդկանց արարքներն ու քաղաքական իրադարձություններն ականատեսի կողմից սերունդների դատին անձնելու անհրաժեշտությունը. «Ջայս տեսեալ մեր՝ ի նուաղեալս ժամանակի Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդս, ոչ յապաղեմք առ յապա թողուլ զյիշատակ անուանն նոցա պարագրութեամբ բանիի համդիպեալ ժողովուրդս՝ որք զկնի մեր լինիցին, դի և զսոցայցս ախորժելի կարծեմ պատմութիւն քան ղնախ եղելոց համապատիւ նոցա սրբոց»²⁸, Ուրեմն՝ արդեն երկի առաջաբանում ներսեսը հայտնում է, որ այն ինչ ինքը մատուցելու է ընթերցողին, մեր այսօրվա պատկերացումներով պատմություն է, Հեղինակի նպատակն է ցույց տալ հայ ժողովրդի եկեղեցաքաղաքական կյանքում Հայոց կաթողիկոսների բացառիկ դերը, շնորհալուծ հիշատակել, որ ինքն այդ եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյա է։ Այդ իսկ պատճառով Լամբրոնացին իր երկր սկսում է Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսին ուղղված ներբողյանով, ընդգծելով, որ նրա կաթողիկոսության ժամանակաշրջանը արթնացնող շունչ հաղորդեց Հայոց եկեղեցական և քաղաքական կյանքին («փարատեաց յաշխարհէ զմորիկ մեղացն և վերստին կանաչացոյց զմեղ ի ձմերային մեռելութենէն յաճումն հոգեւոր չափոյ հասակի կատարմանն Քրիստոսի») ²⁹,

իրադարձությունները, որոնց անդրադարձել է ներսես Լամբրոնացին, սկսվել են Գրիգոր Բ-ի ազգական և հոգևոր որդի Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի³⁰ իշխանության վերջին տարում և շարունակվել են վերջինիս հարազատ եղբայր ներսես Շնորհալու և ապա՝ նրանց ազգական Գրիգոր Դ Տղայի կաթողիկոսության տարիներին։ Վերջին երկու կաթողիկոսներն էլ Պետ ժողովածուի գլխավոր գործիչներն են³¹։

Պետ-ի առաջաբանում պատմվող իրադարձությունների ժամկետն վայրը Կիլիկիան³² է, որ երկպառակտչական պատերազմ էին վարում երկու հայազգի իշխաններ՝ Օշին Հեթումյանը և Թեոդորոս (Թորոս) II Ռուբինյանը, որոնք «էին պատուով ի Յունաց արքայէն սեւաստոսութեամբ, և էին ընդ ծառայութեամբ և հնազանդութեամբ նորոս»³³, Այս ուղիղում ակնհայտ է ներսես Լամբրոնացու աչառու վերաբերմունքը դեպի Ռուբինյան իշխանական ընտանիքը³⁴, նկատելով ընդունելով Բյուզանդական կայսրությանը Օշինի և Թորոսի

27 Պետ, 1871, էջ 85։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

30 Գրիգոր Գ Պահլավունու գործունեությունը բնութագրելիս ներսես Լամբրոնացին ընդգծում է նաև, որ նա ներսես Շնորհալու դաստիարակն է (տե՛ս Պետ, 1871, էջ 86)։

31 Պետ-ում ներսես Լամբրոնացու համար Գրիգոր Բ Վկայասերը «երանելի» (Պետ, 1871, էջ 85) է, Գրիգոր Գ Պահլավունին՝ «սարազան» (էջ 86), ներսես Դ Շնորհալին՝ «երանելի» (էջ 154, 165, 166, 188) և «սուրբ» (էջ 189), Գրիգոր Դ Տղան՝ «սուրբ» (էջ 166, 180, 200 տ. 3, 9)։

32 Պետ, 1871, էջ 86—87։

33 Նույն տեղում, էջ 85։ Հմմտ. նաև Ա. Բոդուան. Բյուզանդիա..., էջ 226։

34 Այդ վերաբերմունքը ակնհայտորեն երևում է երկու քաղաքական գործիչների ընդհանուր համար «թաղադրված ածականներից Թորոս Ռուբինյանի անունը տրվում է երկու անգամ՝ «Իշխան» որոյ անունն Թեոդորոսը ե համբարտաւան իւսունն Թեոդորոս», իսկ Օշին՝

ստորակա համարվելու հանգամանքը, ներսեսը մեղադրում է երկրորդին. որ նա «թեկն ածէր ընդդեմ Թագաւորին Հոռոմոց պէսպէս պատճառաւ, մոռացեալ զերդմնակոտ դաշինսն՝ որ ի միջի, և զհնազանդութիւն նորա»³⁵, հակադրելով Թորոսի վարքագիծը Օշինի հավատարմությանը դեպի կայսրութիւնը («հաւատարմապէս մնացեալ ի հնազանդութիւն արքային Հոռոմոց»)³⁶։ Ըստ Լամբրոնացու, այս պատերազմի հիմնական պատճառը Օշինի հավատարմութիւնն էր «Հոռոմոց Թագաւորին»³⁷, որի համար «ոչ սակաւ խռովութիւնք լինէր և հեղմունք արեան ի մէջ երկուց իշխանացն»³⁸։

Ներսես Լամբրոնացին ևս հավաստում է, որ Լամբրոնի տեր Օշին Հեթումյանը բյուզանդական քաղաքականության հետևողական պաշտպանն է, բյուզանդական կայսեր հավատարիմ ստորական։ Կոստանդնուպոլսի գերիշխանության դեմ Թորոս Ռուբինյանի յուրաքանչյուր ելույթ Օշինը դիտում է իբրև սեփական իշխանության դեմ ուղղված կանխամտածված գործողություն։ Լամբրոնին տիրող Հեթումյանների քաղաքական բոլոր ձգտումները XII դարի 60—80-ական թթ. ամբողջովին ու կուրորեն կապված են Կիլիկիայում բյուզանդական պետության հետապնդած շահերին։ Այդ քաղաքականության գաղափարախոսական դիրքերի վրա է կանգնած նաև ՊԽՄ ժողովածուի հեղինակ Ներսես Լամբրոնացին, որը Թորոս II Ռուբինյանի պայքարը Կիլիկիայի հայկական իշխանությունները միավորելու և քաղաքական անկախություն ձեռք բերելու համար բնութագրում է որպես «խռովութիւն»³⁹։

Ներսես Լամբրոնացու համար Բյուզանդական կայսրությունը համաշխարհային քաղաքակրթության պահպանման սյունն ու ապավինն է։ Խոսելով Մանուել I Կոմենենոս կայսեր մահից հետո Բյուզանդիայի սահմաններում տեղի ունեցող վերահիշյալ խռովությունների մասին, Լամբրոնացին դրանք մատուցում է որպես աշխարհի կործանման նշան⁴⁰։ Այդ միտումը ընթերցողի մեջ սերմանելու համար քիչ դեր չի խաղում քաղաքական իրադարձությունների հետ մի շարք բնական երևույթների զուգահեռ նկարագրությունը։ Օրինակ, Մանուել կայսեր մահվան օրվանից սկսած «մինչև ի նոյն օրն հոլովմամբ շաքաթուն, մղտացաւ օդս ընդ ամենայն աշխարհ, և լոյս արեգականն պակասեալ՝ շամանդաղ սփռէր, այլ և անձրև մոխրախառն եկն յամենայն երկիր»⁴¹։ Բնական երևույթի նման նկարագրությունից հետո Ներսես Լամբրոնացին եզրակացնում է. «Յորոց ծանեաք իսկապէս, եթէ ընդ փոխելն մահումար բարեպաշտ Թագաւորին՝ եզև պատուհաս այս ի վերայ աշխարհի. որ և է իսկ ճշմարտապէս»⁴²։ Եվս մեկ օրինակ. խոսելով Միլիտենֆայելի⁴³ ճակատամարտում բյուզանդական բանակի ջախջախման մասին, ակնատես-

Հեթումյանը հիշատակվում է. «Բարեպաշտ իշխանն Օշին» (Լրկու անգամ), «Օշնի սևաստոսին» (մեկ անգամ), «գերապատի իշխանին Օշնի» (մեկ անգամ) բառակապակցություններում (տե՛ս ՊԽՄ, 1871, էջ 86—87, 107)։

³⁵ ՊԽՄ, 1871, էջ 86։

³⁶ Նույն տեղում։

³⁷ Այսպես են անվանում բյուզանդական կայսրին XII դարի բոլոր հայ մատենագիրները։

³⁸ ՊԽՄ, 1871, էջ 86։

³⁹ Նույն տեղում։

⁴⁰ ՊԽՄ, 1871, էջ 201։ Այս առումով հետաքրքիր է հետևյալ հատվածը. «Արգ ընդ սեանն տատանել՝ շարժի և աշխարհ. ընդ ամենայն կողման սովով և սրածութեամբ և սասանութեամբ, որպէս ասաց Քրիստոս յաստուածապատում աւետարանութեանն յաղագս կոտորածին» (ՊԽՄ, 1871, էջ 201)։

⁴¹ ՊԽՄ, 1871, էջ 201։

⁴² Նույն տեղում։

⁴³ Ըստ Ներսես Լամբրոնացու ճակատամարտի վայրը գտնվում է «մերձ յիկոնիւն, ի տեղւոյն՝ որ կոչի Մելիտենի» (ՊԽՄ, 1871, էջ 168)։ Այս տեղեկությունը կրկնում է նաև Սմբատը (տե՛ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 198)։

հեղինակը նկարագրում է նաև 1176 թ. ապրիլի 11-ին տեղի ունեցած արևի խավարումը⁴⁴, որը, ըստ Ներսես Լամբրոնացու, տեղի է ունեցել ճակատամարտից չորս ամիս առաջ⁴⁵։ Ապա ՊԽՄ-ի հեղինակը այսպես է գնահատում ինական երևույթի բրիտանական-ճակատագրական նշանակությունը. «Եթե ղեկորուստ բրիտանացիներն գուշակեսց՝ ոչ գիտեմ, և եթե զսովոյն սաստկութիւն՝ որ ի նոյն ամիս եղե, և ոչ զայն ևս»⁴⁶։ Ուրեմն՝ Ներսես Լամբրոնացու քաղաքական հավատամքին համաձայն պետք է ամեն կերպ աջակցել Բյուզանդիայի հզորութեան ամրապնդմանը և դատապարտել ու խանգարել Թորոս II Ռուբինյանի գործունեությանը, որը «թէկն ածէր ընդդէմ թագաւորին Հոռոմոց պէսպէս պատճառաւ մոռացեալ զերդմնակուռ դաշինսն»՝ որ ի սղի, և ղհնադանդութիւն նորա»⁴⁷։ Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր հարմար պահի Լամբրոնացիներն ոգևորված ներքողաններ է ձգում։ Մանուել I Կոմնենոսին՝ XII դարի 60—70-ական թթ. Հայ-բյուզանդական փոխհարաբերություններում բյուզանդական կողմի հիմնական հերոսին⁴⁸, Ներսես Լամբրոնացու համար Մանուել I Կոմնենոսը⁴⁹ Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների ամենակատիվ մասնակիցն է։ Նախած ՊԽՄ ժողովածու մտած առաջին վավերագիրը (1165 թ. Ներսես Շնորհալու գրած թուղթը) Լամբրոնացիներ համարում է Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատար-կառավարչի պատվերով գրված փաստաթուղթ⁵⁰, այնուամենայնիվ բանակցությունների հետագա ընթացքում Մանուել I Կոմնենոսը այդ փոխհարաբերությունների իսկական ոգին է և, ըստ հավաքածուի հեղինակի, միայն նրա մահն է արգելակում վերջնական համաձայնության կնքումը։ Իհարկե ժողովածուում հիշատակվում են նաև բանակցություններին մասնակցած բյուզանդական Միքայել Գ Անքիալոս⁵¹ և կայսեր թաղման արարողու-

44 Արեղակի այս խավարման մասին աճ՝ս Բ. Ծ. Թումանյան. Հայ աստղագիտության պատմություն (XIX դ. սկզբից մինչև 1920). Երևան, 1968, էջ 145, Ն. Գ. Մարգարյան. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, 1980, էջ 179—180, մասնավորապես՝ ծան. 181։

45 Ներսես Լամբրոնացիներ խավարումը ճշգրտորեն թվագրում է. «Ի նոյն ամիս (իմա՝ ճակատամարտի տարում—Ա. Բ.)... յետ սրբոյ Պատեքին, յաւուր նոր Կիւրակէին» (ՊԽՄ, 1871, էջ 168)։

46 ՊԽՄ, 1871, էջ 169։

47 ՊԽՄ, 1871, էջ 86։

48 Մանուել Ա Կոմնենոսը ՊԽՄ-ի բնագրում երբեմն կոչվում է առքա, երբեմն՝ թագավոր, Առքա հիշատակված է՝ ՊԽՄ, 1871, էջ 86 տ. 12, 107 տ. 9, 11, 109 տ. 29, 153 տ. 25, 168 տ. 27, 200 տ. 2, 7, թագաւոր՝ նույն տեղում, էջ 86 տ. 15, 24, 87 տ. 3, 109 տ. 23, 25, 27, 143 տ. 32, 144 տ. 1, 145 տ. 20, 153 տ. 22, 25, 154 տ. 6, 159 տ. 35, 160 տ. 1, 166 տ. 5, 17, 168 տ. 8, 10, 15, 17, 19, 24, 169 տ. 5, 180 տ. 25, 201 տ. 14, 32։

49 Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, թե ի՞նչ մակդիրների հետ են հանդես գալիս այդ (Թագաւոր եւ առքա) տերմինները Բյուզանդական կայսրը կոչվում է «Ծունաց առքայ» (էջ 86 տ. 12), սակայն «թագաւոր Հոռոմոց» (էջ 55 տ. 15, 24). այնուամենայնիվ կա նաև «առքա Հոռոմոց» (էջ 200 տ. 7) բանաձևը, «Բարեպաշտ» մակդիրը հանդիպում է և թագաւոր (էջ 109 տ. 21, 154 տ. 6, 166 տ. 5, 17, 168 տ. 9, 19, 169 տ. 5, 201 տ. 18) և առքա (էջ 168 տ. 17, 200 տ. 7) տերմինների հետ։ Առքա տերմինի հետ հանդիպում է նաև «բարեպաշտապարտ» (էջ 153 տ. 25) և «բարեպաշտ աստուածաւէր» և իմաստուն» (էջ 200 տ. 7), իսկ թագաւորի հետ՝ «աթմանադովելի», (էջ 201 տ. 32) ածականներ։

50 Ըստ Լամբրոնացու՝ «որ և թախանձեալ զերանելին, զի զղաւնուլին Հայա։ տանեայց րանի։ ասացեալն՝ Պրով պարունակեալ տացէ նմա» (ՊԽՄ, 1871, էջ 87)։

51 Ներսես Լամբրոնացիներ կաթողիկոս Ներսես Դ Շնորհալու առաջին նամակի կապակցությամբ ակնարկում է նաև Ղուկաս Խրիստոբերգես (1157—1170) պատրիարքին. «Առեալ զնամակս ի ձեռս թագաւորն ընթանալոյ ի մեծ եկեղեցին, ցուցանելով տիեզերական հայրապետին» (ՊԽՄ, 1871, էջ 143)։

թյունը գլխավորած Թեոդոսիոս Ա Բորադիոտես (1179—1183)⁵² պատրիարք-ները⁵³, սակայն նրանց դերը միջեկեղեցական գործերում ստորադասված է Հայասեր կամքին: Այդ են վկայում ներսես Լամբրոնացու գրեթե բոլոր վկայությունները⁵⁴:

Այսպիսով, ներսես Լամբրոնացու կազմած ՊԽՄ ժողովածուն ներկայացնում է 1165—1178 թթ. հայ-բյուզանդական փոխհարաբերությունների ոչ միայն հիմնական վավերագրերը, այլ նաև առաջաբանում, մի շարք թղթերի գրվելու հանգամանքների պարզարանմանը նվիրված հատվածներում և վերջաբանում պատմական աշխատություն է. որը նպատակ ունի հետագա սերունդներին հաղորդակից դարձնելու XII դարի 60—70-ական թթ. իրադարձություններին: Ներսես Լամբրոնացին այս երկը ավարտել է 1182—1183 թթ.: Ժողովածուի կազմողը եկեղեցիների միության հայ-բյուզանդական բանակցությունների հետեղական էղղմնակից է:

НЕРСЕС ЛАМБРОНАЦИ И СБОРНИК ДОКУМЕНТОВ, КАСАЮЩИХСЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ОТНОШЕНИИ В XII ВЕКЕ

А. А. БОЗОЯН

Резюме

Составленный сторонником армяно-византийской церковной унии Нерсесом Ламбронаци сборник документов, касающихся армяно-византийских взаимоотношений в 1165—1178 гг.—ценный источник для изучения истории двух церквей. Автор включил в сборник основные документы указанного периода, написал предисловие, послесловие и примечания к некоторым посланиям. Нерсес Ламбронаци попытался придать своему труду форму исторического сочинения, ставя перед собой цель ознакомить будущее поколение с событиями в Киликии и Северной Сирии 60—70-х гг. XII в.

⁵² Այս պատրիարքին ըստ Նիկենոսի Խոնտատեսի վկայությամբ. Անդրանիկոս I Կոմնենոսը գահընկեց է անում, ակնարկելով նրա հայկական ծագումը (ան՝ս Nicetae Choniatae Historia Recensuit, Ioannes Aloysius van Dieten, Berolini et Novi Eboraci, 1975, p. 253): Ներսես Լամբրոնացին սխալմամբ Թեոդոսիոս Ա-ին համարում է Միքայել Գ-ի հաջորդը (ՊԽՄ, 1871, էջ 200 տ. 34), չհիշատակելով նրանց միջև գահակալած Խարիտոն Ծվղենիոսեսի (1178—1179) անունը:

⁵³ Ներսես Լամբրոնացին բյուզանդական պատրիարքներին անվանում է. «տիեզերական հայրապետ» (ՊԽՄ, 1871, էջ 143 տ. 33), «ախեզերական պատրիարք» (ՊԽՄ, 1871, էջ 154 տ. 18), «ղարբևպիսկոպոս մեծի քաղաքին» (էջ 200 տ. 19), «քահանայապետ» (էջ 200 տ. 19), «հայրապետ» (էջ 200 տ. 29, 201 տ. 4, 10), «հայր սուրբ» (կամ «հայրապետ սուրբ» ՊԽՄ, 1871, էջ 200 տ. 32): Ներսես Լամբրոնացին երկու անգամ հիշատակում է Անտիոքի օրթոդոքս պատրիարքին. «մեկ անգամ՝ Դոմեակիով՝ Եկատի ունենալով նաև Կ. Պոլսի եկեղեցու առաջնորդին (պատրիարքացն» ՊԽՄ, 1871, էջ 168 տ. 12), մյուս անգամ՝ «սրբազան պատրիարքին» (ՊԽՄ, 1871, էջ 169 տ. 6):

⁵⁴ Օրինակ, հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների առաջին թղթերը Բյուզանդական կայսրության անունից գրում է Մանուել I Կոմնենոսը (ան՝ս ՊԽՄ, 1871, էջ 107, 109, 143—144), իսկ հետագայում կայսերական վավերագրերի հետ Հոռմկլա ևն ուղարկվում Միքայել Գ Անթիաուսի թղթերը (էջ 153, 159, 168):